ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 41 - 42 (16436) ՇԱԲԱԹ, 28 ՄԱՅԻՍԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

ՔԱՌՈՐԴ ԴԱՐ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մայիսի 26-ին Համայն Վրաստանը նշեց երկրի պետական անկախության վերականգնման 25-ամյա տարելիցը:

Հոբելյանի առթիվ տոնական միջոցառումներ անցկացվեցին ողջ երկրի մասշտաբով: Մասնավորապես, Թբիլիսիում այդ օրը Ազատության հրապարակում տեղի ունեցավ նորակոչիկների երդման հանդիսավոր արարողությունը: Հոբելյանի շրջանակներում անցկացվեցին ծաղիկների փառատոն, իսկ սովորող երիտասարդների պալատում վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու մասնակցությամբ, տեղի ունեցավ դպրոցական մրցույթի հաղթողների աշխատանքներով ժամանակի պարկուճի տեղակայման արարողությունը: Տոնական միջոցառումներն ավարտվեցին հանդիսավոր ընդունելությամբ:

Մայիսի 26-ին Վրաստանի ղեկավարությունը, տոնի կապակցությամբ ժամանած հյուրերի՝ Հայաստանի, Լիտվայի, Ուկրաինայի, Լատվիայի, Թուրքիայի, Իսրայելի, Չեխիայի խորհրդարանների պատվիրակությունների, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի Հարավային Կովկասի հարցերով հատուկ ներկայացուցիչ Քրիստիան Վիգենինի, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ միասին, այցելեց Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշահամալիր:

Հոբելյանական միջոցառումների կիզակետը Թբիլիսիի Ազատության հրապարակն էր:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՆԱՏՕ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՎՐԱՍՏԱՆ ՆԱՏՕ-ՈՒՄ»

Թբիլիսիում անցկացվեց Վրաստանի պաշտպանության եւ անվտանգության հարցերին նվիրված երկօրյա խորհրդաժողով: Թվով տասներորդ համաժողովում քննարկվեցին սեւծովյան տարածաշրջանի անվտանգության հարցերը եւ ժամանակակից միջազգային կարգի խնդիրների ազդեցությունը փոքր երկրների վրա: Բացի այդ, խորհրդաժողովի մասնակիցներն անդրադարձան ՆԱՏՕ-ի Վարշավայում կայանալիք գագաթաժողովին: Միջոցառմանը մասնակցեցին 300 հյուրեր՝ պաշտոնատար անձինք, փորձագետներ ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Մասնակիցների թվում էր նաեւ Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էր Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Էնրիկո Ապրիամովը:

Խոհրդաժողովում ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նա նշեց, որ Վրաստանը մեծ հույսեր է կապում ՆԱՏՕ-ի Վարշավայի գագաթաժողովի հետ եւ սպասում է գագաթաժողովի կողմից երկրի նշանակալից առաջընթացի վավերացում:

«Համոզված եմ, որ Վարշավայի գագաթաժողովում կրկին անգամ կցուցադրվի միասնությունը եւ ալյանսի ուժը, ու կրկին անգամ կընդգծվի ՆԱՏՕ-ի միտումը խաղաղության եւ կայունության ուղղությամբ: Վրաստանը հպարտանում է նրանով, որ ինքը որպես ամենամոտ ու ամենահուսալի ռազմավարական գործընկեր, ունի ՆԱՏՕ-ի կողքին կանգնելու հնարավորություն: Երկիրը միտված է, որպեսզի մոտ ապագայում դառնա ալյանսի լիարժեք անդամը: Հուսով ենք, որ գագաթաժո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Մայիսի 26-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանի պետական անկախության վերականգնման 25-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու համար, եռօրյա այցով Վրաստան ժամանած Հայաստանի Ազգային ժողովի փոխխոսնակ, խորհրդարանի Հայաստան-Վրաստան բարեկամական խմբի ղեկավար Հերմինե Նաղդալյանի գլխավորած պատվիրակության հետ, որի կազմում էին Հայաստան-Վրաստան խորհրդարանական բարեկամական խմբի անդամներ Վարդան Այվազյանը, Տաճատ Վարդապետյանը, Խաչատուր Քոքոբելյանը;

Հանդիպմանը մասնակցեց նաեւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

Հանդիպմանը Հերմինե Նաղդալյանը հայ ժողովրդի անունից խորհրդարանի նախագահին շնորհավորեց անկախության հոբելյանի առթիվ եւ նշեց, որ մայիսի 26-ը Վրաստանի հաղթանակի օրն է: Նա հույս հայտնեց, որ Վրաստանը կկարողանա հաջողությամբ հաղթահարել ծառացած մարտահրավերները եւ նշանակալից ավանդ կներդնի տարածաշրջանի խաղաղության, անվտանգության եւ կայունության գործում:

Հանդիպմանը Դավիթ Ուսուփաշվիլին եւ Հերմինե Նաղդալյանը քննարկեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

Մայիսի 23-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մասնակցեց Ստամբուլում անցկացվող հումանիտար համաշխարհային գագաթաժողովին: Գագաթաժողովի անցկացման նախաձեռնողներն էին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը եւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

Գագաթաժողովի օրակարգում հումանիտար հիմնախնդիրներն էին եւ դիմակայության գոտիներում ստեղծված իրավիճակը: Վրաստանի նախագահն իր ելույթում անդրադարձավ Վրաստանի բռնազավթված տարածքներում վերջին տարածքներում ստեղծված իրավիճակին, նշելով, որ երկիրը կրկին անգամ կանգնած է սողացող բռնազավթման սպառնալիքի առջեւ:

Գագաթաժողովի աշխատանքի շրջանակներում՝ Վրաստանի նախագահը համաշխարհային լիդերների հետ ունեցավ երկկողմ հանդիպումներ:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Մայիսի 27-ին Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վախթանգ Կապանաձեն հանդիպում ունեցավ Վրաստանի պաշտպանության եւ անվտանգության հարցերին նվիրված բազմազգ համաժողովի աշխատանքին մասնակցելու նպատակով Թբիլիսի ժամանած Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի եւ Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Էնրիկո Ապրիամովի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին ռազմական ոլորտում երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարների հետ առնչվող հարցեր:

Այցի շրջանակներում Հայաստանի բարձրաստիճան զինծառայողները հանդիպում ունեցան նաեւ համաժողովին մասնակից գործընկեր պետությունների ռազմական գերատեսչությունների պաշտպանական քաղաքականության ոլորտի ղեկավարների հետ: Հանդիպումների օրակարգում եղել են գործընկեր պետությունների հետ երկկողմ պաշտպանական համագործակցության եւ միջազգային ու տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հարցերը:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՆԱՏՕ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՎՐԱՍՏԱՆ ՆԱՏՕ-ՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ղովը կճանաչի մեր կողմից ձեռք բերած նշանակալից առաջընթացը»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին: Վարչապետի խոսքերով, Վարշավայի գագաթաժողովը կենտրոնանալու է ալյանսի անդամ երկրների, առանձնապես ալյանսի արեւելյան ճակատի անվտանգության հարցերի վրա եւ այդ առումով Վրաստանը կարող է նշանակալից դեր կատարել: «Մենք ղեկավարվում ենք սկզբունքով, որը դրված է մեր համագործակցության հիմքում՝ ցանկանում ենք ավելի շատ ՆԱՏՕ Վրաստանում եւ ավելի շատ Վրաստան՝ ՆԱՏՕ-ում»,- ընդգծեց Վրաստանի վարչապետը:

Խորհրդաժողովի մասնակիցների թվում էին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի՝ Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի երկրների հարցերով հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրայը եւ ԵԱՀԿ-ի գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆՈՂԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԼԱՐԻՆ ՄՈՏԵՆՈՒՄ Է ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԵՏԻՆ»

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրու հայտարարությամբ, ազգային տարադրամը մոտենում է հավասարակշռության նոր կետին, եւ դրա համար Ազգային բանկը իրականացնում է համապատասխան քաղաքականություն:

Ֆինանսների նախարարի խոսքերով, այդ գործընթացում էական դեր են կատարում արտաքին գործոնները, քանի որ տարադրամի փոխանակման կուրսը գտնվում է արտաքին տնտեսական գործոնների ազդեցության տակ: Դեռեւս անցյալ տարեվերջին եւ ընթացիկ տարվա սկզբին մենք նշեցինք, որ մակրոտնտեսական միջավայրը բարելավվել է եւ անպայման կսկսվի լարիի կուրսի ամրացումը: Այդպես էլ տեղի ունեցավ: Միջավայրն իրոք փոխվեց, այդ թվում նաեւ մուտքերի տեսանկյունից: Լարին միտված է նոր հավասարակշռված կայունության կողմը»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

Անդրադառնալով պետբյուջեի թեմային, ֆինանսների նախարարը նշեց, որ, ամենայն հավանականությամբ, այս տարի բյուջեի պակասուրդը կլինի մոտ երեք տոկոս: Նոդար Խադուրու հայտարարությամբ, ներկայումս կառավարությունը ձեռնամուխ է եղել այնպիսի նախագծերի իրականացմանը, որոնք բյուջեում նախապես նախատեսված չէին: «Թբիլիսիում ներկայումս աշխատում է Արժույթի միջազգային հիմնադրամի առաքելությունը: Մենք հիմնադրամի, Ազգային բանկի, էկոնոմիկայի նախարարության հետ միասին աշխատում ենք մակրոտնտեսական կանխագծման հստակեցման շուրջ: Նշեմ, որ վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը, Վրաստանի տնտեսական աճի կանխագծման ցուցանիշը ավելացրել ու հասցրել է 3-4 տոկոսի: Հուսով ենք, որ նույնը կանեն նաեւ միջազգային մյուս ինստիտուտները»,- ընդգծեց ֆինանսների նախարարը:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

Noble Partner ՎՐԱՑ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ

Թբիլիսիի մերձակա Վազիանի կայանում ավարտվել են Noble Partner-2016 («Արժանի գործընկեր») վրաց-ամերիկյան լայնածավալ զորավարժությունները:

Զորավարժություններն անցկացվում էին մայիսի 11-ից: Ռազմական տեխնիկան կայանում էր գտնվում մինչեւ մայիսի 26-ը, երբ կայացավ փակման պաշտոնական արարողությունը:

Ընդամենը միջոցառումներին մասնակցել են շուրջ 1,3 հազար զինվորականներ, որոնց թվում 600 մարդ՝ ԱՄՆ-ից, 500-ը՝ Վրաստանից եւ 150-ը՝ Մեծ Բրիտանիայից: Վարժանքներում գործի են դրվել M1A2 Abrams ամերիկյան տանկեր եւ M2 Bradley հետեւակի մարտական մեքենաներ, ինչպես նաեւ վրացական զինված ուժերի տեխնիկա՝ T-72 տանկեր ու հետեւակի մարտական մեքենաներ:

«Նման յուրաքանչյուր վարժանք այն բանի երաշխիքն է, որ Վրաստանի զինված ուժերն ավելի են մոտենում ՆԱՏՕ-ին, սակայն միայն զինուժերի մոտիկությունը բավական չէ, դրա համար քաղաքական կոնսենսուս է անհրաժեշտ»,- հայտարարել է Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԸՆԴՀԱՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Մայիսի 25-ին հերթական ֆիզիկական դիմակայություն տեղի ունեցավ խորհրդարանում, «Վրացական երազանքի» ու «Ազգային շարժման» ներկայացուցիչների միջեւ:

Այս անգամ ընդհարման պատճառը մեծամասնական Զազա Պապուաշվիլու նախաձեռնությունն էր, որը առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցել 2011 թվականի մայիսի 26-ին Ռուսթավելու պողոտայում անցկացված խաղաղ ակցիայի նախորդ իշխանության կողմից զոհված մասնակիցների հիշատակին: Նախաձեռնությունը աջակցության արժանացավ խորհրդարանական մեծամասնության կողմից, թեպետ ընդդիմությունը ներկայացնող ազգային շարժման պատգամավորները հրաժարվեցին ոտքի կանգնել: Դրանից վիրավորված մեծամասնական Օթար Չդիլելին վիրավորական խոսքեր հասցեագրեց նրանց, ինչը եւ դարձավ ֆիզիկական ընդհարման պատճառ:

ՏՀԱՏ ՄԻՋԱԴԵՊ՝ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մայիսի 22-ին Սամեգրելոյի, Գուրիայի, Շիդա Քարթլիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանների առանձին բնակավայրերում անցկացվեցին տեղական ինքնակառավարման միջանկյալ ընտրություններ:

Ընտրությունների արդյունքներով՝ ինն ընտրատարածքներից յոթում հաղթանակը տոնեցին «Վրացական երազանքի», իսկ երկուսում՝ ազգային շարժման ներկայացուցիչները:

Այդ օրը Զուգդիդիի շրջանի Կորցխելի գյուղում տեղի ունեցավ տհաճ միջադեպ՝ ֆիզիկական դիմակայություն «Ազգային շարժման» եւ «Վրացական երազանքի» միջեւ: Տեղի ունեցած ընդհարման արդյունքում տուժեց մի քանի մարդ, այդ թվում՝ «Ազգային շարժման» ներկայացուցիչներ Նիկա Մելիան, Գիգա Բոկերիան եւ Թենգիզ Գունավան:

Ներկայումս ՆԳ նախարարությունը եւ դատախազությունը հետաքննում է տեղի ունեցած միջադեպը:

Տեղի ունեցածի դատապարտմամբ հանդես եկան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչները:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՈՒՐՉԱ ԳՅՈՒՂՈՒՄ

Մայիսի 19-ին Խուրչի գյուղի հարակից տարածքում ռուս սահմանապահի կողմից սպանվել է Խուրչա գյուղի բնակիչ Գիգա Օթխոզորիան:

Տեղի ունեցածը հետաքննում է Վրաստանի ՆԳ նախարարությունը: Ինչպես հայտարարեց ՆԳ նախարար Գիորգի Մղեբրիշվիլին, սպանությունը անպատիժ չի մնա: Ինչպես նշեց նա, Վրաստանի իշխանությունները միջազգային հանրությանը մանրամասն տեղեկատվություն են ներկայացրել տեղի ունեցածի մասին: Այդ մասին Ստամբուլում անցկացված հումանիտար գագաթաժողովում իր ելույթում խոսել է նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Նշենք, որ Վրաստանի կառավարության որոշմամբ, զոհված Գիգա Օթխոզորիայի ընտանիքին տրվել է բնակարան:



G7

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԿՊԱՀՊԱՆՎԵՆ

«Մեծ յոթնյակի» երկրների ղեկավարները հանդես են եկել Ռուսաստանի նկատմամբ սահմանած պատժամիջոցները պահպանելու օգտին: Այդ մասին ասված է G7-ի՝ Ճապոնիայում կայացած գագաթաժողովի հանրագումարային հռչակագրում:

Փաստաթղթում G7-ի ներկայացուցիչները մտահոգություն են հայտնում Ուկրաինայի հարավ-արեւելքում իրադրության սրվելու կապակցությամբ: Փաստաթղթի հեղինակները նաեւ հիշեցնում են, որ չեն ճանաչում Ղրիմի միացումը Ռուսաստանին:

Պատժամիջոցները կարող են հանվել, եթե Ռուսաստանը կատարի բոլոր պարտավորությունները, նշվում է փաստաթղթում, որը նաեւ հավելյալ սահմանափակիչ միջոցներ է նախատեսում ՌԴ-ի նկատմամբ:

ԹՈՒՐՔԻԱ ԲԻՆԱԼԻ ՅԸԼԴԸՐԸՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Մայիսի 22-ին Բինալի Յըլդըրըմը ընտրվեց Թուրքիայի իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության (ԱԶԿ) նախագահ:

Կառավարությունում տրանսպորտի, նավագնացության եւ հաղորդակցությունների նախարարի պաշտոնն զբաղեցնող Յըլդըրըմը ԱԶԿ-ի ղեկավարի պաշտոնի միակ թեկնածուն էր: Ավանդաբար երկրի վարչապետ է դառնում ամենախոշոր կուսակցության նախագահը:

Մայիսի 24-ին Բինալի Յըլդըրըմը նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին է ներկայացրել 65-րդ կառավարության կազմը:

ՀՈՒՆԱՍՏԱՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԽԻՍՏ ՄԻՋՈՑՆԵՐ

Մայիսի 22-ին Հունաստանի խորհրդարանը հավանություն է տվել խիստ խնայողության նոր միջոցների մասին օրենքին: Փաստաթուղթը նախատեսում է կատարել վերջին 17 «նախնական գործողությունները»՝ Բրյուսելի կողմից վարկաբաժնի հատկացման պայմանները:

Բացի պետական սեփականության մասնավորեցումից ստացված միջոցների կառավարման նոր հիմնադրամի ստեղծումից, նոր օրենքը նախատեսում է մի շարք անուղղակի հարկերի ավելացում, որոնց գանձումից կառավարությունը ծրագրում է մինչեւ 2018 թվականը լրացուցիչ ստանալ 1,8 միլիարդ դոլար:

Եվրախումբը համաձայնեցրել է Հունաստանին 10,3 մլրդ եվրոյի չափով ֆինանսական օգնության հերթական մասնաբաժնի հատկացումը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՆԵՐՈՒՄ՝ ՆԱԴԵԺԴԱ ՍԱՎՉԵՆԿՈՅԻՆ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հրամանագիր է ստորագրել ուկրաինացի նախկին զինծառայող Նադեժդա Սավչենկոյին ներում շնորհելու մասին: Դրան նախորդել է պետության ղեկավարի հանդիպումը զոհված ռուս լրագրողների հարազատների հետ, որոնց զոհվելու մեջ մեղադրվում էր Սավչենկոն:

Փաստորեն, կատարվել է փոխանակում: Նադեժդա Սավչենկոյի դիմաց ուկրաինական կողմը ազատ է արձակել Ռուսաստանի երկու քաղաքացիներ՝ Ալեքսանդր Ալեքսանդրովը եւ Եվգենի Երոֆեեւը, որոնք դատապարտվել էին Կիեւում:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆԱԽԱԳԻԾ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԻՄՆՎՈՒՄ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ ԻՐ ՄԵԾՈՒԹՅԱՄԲ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Մայիսի 23-ին տեղի ունեցավ տեխնոլոգիական նոր ինստիտուտի նախագծի ներկայացման շնորհանդեսը, որին ներկա էին Վրաստանի կառավարության անդամները, օտարերկրյա առաջատար կենտրոնների ու ինստիտուտների, վրացական գիտական շրջանների, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները:

Միջոցառմանը ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Վրացական տեխնոլոգիական ինստիտուտի հիմնադիրը բարեգործական «Քարթու» հիմնադրամն է: Նա էլ կֆինանսավորի ինստիտուտում ուսանողների ուսուցումը եւ գործընկեր կազմակերպությունների նրանց գործուղումները:

Տեխնոլոգիական ինստիտուտի նախագիծը նախատեսում է գիտահետազոտական եւ կիրառական համալիրի հիմնում ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մաթեմատիկայի համալիր տեխնոլոգիաների եւ ինժեներության մագիստրոսի ու դոկտորի ծրագրերով: Ինստիտուտը կունենա նաեւ կիրառական բնույթ: Նշենք, որ Իտալիայից, Շվեյցարիայից, Ճապոնիայից ու Ավստրիայից հետո Վրաստանը հինգերորդն է, որտեղ ստեղծվում է նման մեծության տեխնոլոգիական ինստիտուտ:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ENPARD II ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Եվրամիությունը Վրաստանում գյուղատնտեսության զարգացման համար հատկացրել է լրացուցիչ 50 միլիոն եվրո: Եվրոպական հարեւանության, գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման (ENPARD II) երկրորդ փուլի մեկնարկի համաձայնագիրը ստորագրել են Եվրամիության գլխավոր տնօրինության ղեկավարի հարեւանության եւ ընդլայնման քաղաքականության հարցերով տեղակալ Քատերինա Մատերնովան եւ եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն:

Ստորագրման արարողությանը ներկա էին Վրաստանում Եվրամիության դեսպան Յանոշ Հերմանը, էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլին եւ գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան:

Նախագիծը նախատեսված է 2016-2019 թվականների համար եւ ուղղված է գյուղատնտեսության եւ գյուղի զարգացմանը, ագրարային բարեփոխումների անցկացմանն ու սպասարկումների մատուցման բարելավմանը: Նախագծի բյուջեն դրամաշնորհների եւ տեխնիկական օգնության տեսքով կազմում է 50 միլիոն եվրո:

Ստորագրված համաձայնագրի շրջանակներում հատկացվող 50 միլիոն եվրոյից 27 միլիոնը անմիջականորեն կհասցեագրվի պետբյուջեին: Վրաստանը այդ գումարը երեք տրանշով կստանա 2017-2019 թվականներին, իսկ մնացած 23 միլիոն եվրոն նախատեսված է նախաձեռնությունների ֆինանսավորման համար:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԱՀԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՏ

Մայիսի 25-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին հանդիպում ունեցավ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերիի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի բռնազավթված տարածքներում իրավիճակը, մասնավորապես, այն հիմնախնդիրները, որոնք այդ տարածքներում իրականացվում են տեղաշարժման ազատության սահմանափակման եւ մայրենի լեզվով ուսուցման արգելման կապակցությամբ:

Պաատա Զաքարեիշվիլին ԵԱՀԿ գլխավոր քարտուղարին տեղեկատվություն փոխանցեց նաեւ մայիսի 19-ին ռուս սահմանապահների կողմից Խուրչա գյուղում Գիգա Օթխոզորիայի սպանության վերաբերյալ:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ դիմակայող կողմերի միջեւ վստահության վերականգնմանն ուղղված նախագծերն ու առաջիկա համագործակցության ծրագրերը:

ԾՐԱԳԻՐ

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ՄԻԱՑԱՆ Check in Georgia ՆԱԽԱԳԾԻՆ

Վրաստանի գործարարները միացան Check in Georgia նախագծին: Այդ մասին հայտնի դարձավ Վրաստանի պետական ֆոլկլորային կենտրոնում անցկացված միջոցառմանը, որին մասնակցեցին Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլին, մշակույթի նախարար Միխեիլ Գիորգաձեն եւ մասնավոր գործարար հատվածի ավելի քան քսան ներկայացուցիչ:

Միխեիլ Գիորգաձեի հայտարարությամբ, ներկա փուլում նախագծին արդեն միացել են ավելի քան 20 ընկերություն, եւ նրանց կողմից ներդրվել է շուրջ 6 միլիոն լարի:

Ինչպես նշվեց միջոցառմանը, մշակվել են գործընկերային հատուկ նախագծեր, որոնք կարժանանան բիզնես հատվածի շահագրգռվածությանը: Ծրագրված է երկրի 19 քաղաքներում անցկացնել մոտ 150 համերգ, քարոզարշավ, որոնք հնարավորություն կտան մանրամասն ներկայացնել Check in Georgia նախագիծը:

«Սույն նախագիծը նպատակամղված է արտասահմանում մեր երկրի քարոզչության մակարդակի բարձրացմանը, զբոսաշրջիկների գրավմանը, ինչպես նաեւ ներքին զբոսաշրջության խթանմանը»,- հայտարարեց էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻՑ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ 42 ՏՈԿՈՍՈՎ

Ռուսաստանը 2016 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով Վրաստանի հիմնական առեւտրային գործընկերների թվում զբաղեցնում է երրորդ տեղը՝ զիջելով Թուրքիային ու Իռլանդիային:

Այս մասին վկայում են Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալները:

Այս տարվա հունվար-մարտ ամիսներին Վրաստանի ու Ռուսաստանի միջեւ ապրանքաշրջանառության ծավալն աճել է ավելի քան 8,3 տոկոսով՝ համեմատած 2015 թվականի առաջին եռամսյակի հետ, ու կազմել ավելի քան 185 միլիոն դոլար:

Ռուսաստանին բաժին է ընկել Վրաստանի արտաքին առեւտրաշրջանառության 8,6 տոկոսը: Վրաստանից Ռուսաստան արտահանումն այս տարվա հունվար-մարտ ամիսներին աճել է 42 տոկոսով եւ կազմել ավելի քան 38,5 միլիոն դոլար (վրացական ողջ արտահանման 8,7 տոկոսը): Ավելի քան 9,9 միլիոն դոլար է կազմել վրացական գինու արտահանումը, ինչը 3,8 միլիոն դոլարով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Ռուսաստանից Վրաստան ներկրումն էլ աճել է 2 տոկոսով ու կազմել 146.5 միլիոն դոլար՝ Վրաստանի ողջ ներկրման 8,6 տոկոսը:



ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին կգլխավորի այն պատվիրակությունը, որը հուլիսի սկզբին մեկնելու է Վարշավա՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի գագաթաժողովին: Այդ մասին հայտարարեց Վրաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին:

Ավելի վաղ Վրաստանի նախագահը հրավիրել էր Անվտանգության խորհրդի նիստ, որտեղ, մասնավորապես, կքննարկեն Վարշավայի գագաթաժողովին վերաբերող հարցեր:

Վրաստանը Վարշավայի գագաթաժողովից ակնկալում է երկրի պաշտպանունակության ամրապնդում եւ զեկույց ՆԱՏՕ-ի եւ Վրաստանի հարաբերություններում նոր դրական ասպեկտների մասին:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԴՌՆՓԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վրացական սփյուռքի գագաթաժողովի շրջանակներում, մայիսի 27-ին, Թբիլիսիի «Մարիոտ» հյուրանոցում տեղի ունեցավ Վրաստանի նախագահի, վարչապետի եւ խորհրդարանի նախագահի դռնփակ հանդիպումը:

Հանդիպման մանրամասների վերաբերյալ տեղեկատվություն չի հաղորդվել:

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ Է ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ

Վենետիկի հանձնաժողովը ձեռնամուխ է եղել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու կողմից առաքած օրինանախագծի ուսումնասիրությանը: Խոսքը վերաբերում է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի փոփոխությունների օրինանախագծին: Ինչպես նշված է նախագահի աշխատակազմին՝ Վենետիկի հանձնաժողովից ստացված նամակում, հանձնաժողովը առաջիկա տասը օրվա ընթացքում մտադիր է իր դիտողությունները ներկայացնել «Սահմանադրական դատարանի մասին» օրգանական օրենքի եւ «Սահմանադրական դատավարության մասին» օրենքի փոփոխությունների օրինանախագծի վերաբերյալ:

ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ ՏՐՎՈՒՄ ԵՆ ԱՆՎՃԱՐ

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանիու հրամանով, մայիսի 26-ից մինչեւ հունիսի 26-ը, քաղաքացիների անձնական վկայականները կտրվեն անվճար: Ակցիան նվիրված է Վրաստանի անկախության վերականգնման 25-ամյակին եւ հետապնդում է ընտրացուցակների հստակեցման աջակցության նպատակ:

Փաստաթղթի համար քաղաքացիները պետք է դիմեն Արդարադատության տանը, Քաղաքացիական ռեեստրի տարածաշրջանային ծառայություններին կամ հասարակական կենտրոններին: Ակցիայի շրջանակներում քաղաքացիներն ազատվում են նաեւ լուսանկարման համար սահմանված սակագնից:

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

ՔԱՌՈՐԴ ԴԱՐ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մայրաքաղաքի գլխավոր պողոտայում Վրաստանի նախարարությունները տեղակայել էին վահանակներ, իրենց կողմից իրականացրած եւ ծրագրած նախագծերի վերաբերյալ: Ռուսաբավելու պողատայում նաեւ ներկայացվել էին երկրի պաշտպանության նախարարության սպառազինության նմուշները:

Թբիլիսիի Ազատության հրապարակում անցկացվեց 400 զորակոչիկների երդման հանդիսավոր արարողությունը: Այն ընդունեց Վրաստանի նախագահ, երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատար Գիորգի Մարգվելաշվիլին:

Հայաստանի Ազգային Ժողովի պատվիրակությունը՝ երդման արարողության ժամանակ (առաջին շարքում)

Երդման հանդիսավոր արարողությունն ուղեկցվեց յուրատեսակ զորահանդեսով, որին, այլ ռազմական տեխնիկայի հետ միասին, մասնակցեցին ամերիկյան «Աբրամս» եւ «Բրեդլի» զրահամեքենաները, Վրաստանի զինված ուժերի 12-րդ գումարտակի ՆԱՏՕ-ի արագ արձագանքման «Ալֆա» ստորաբաժանման վաշտը, ԱՄՆ-ի բանակի եվրոպական հրամանատարության եւ Մեծ Բրիտանիայի զինծառայողները:

Թբիլիսիի Ազատության հրապարակից բացի, զորակոչիկների երդման արարողություններ անցկացվեցին Կախեթիում՝ Իղալթո վանական համալիրի բակում, Սամեգրելոյում՝ Նաքալաքեւի ամրոցում, Իմերեթիում՝ Քութայիսիի թատրոնի հարակից տարածքում, Սամցխե-Ջավախեթիում՝ Վարձիայի համալիրում, Աջարիայում՝ Բաթումիի զբոսայգում:

Վրաստանի պետական անկախության 25-ամյա տարելիցին նվիրված միջոցառմանը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին իր խոսքում նշեց, որ քառորդ դար առաջ Վրաստանն իր ուղին սկսեց անկախությունից դեպի ազատություն: «Ազատության ճանապարը» նշանակում է՝ ազատ հասարկության ստեղծում ազատ մարդկանցից: Ազատ մարդը ոչ միայն ինքն է ազատ, այլեւ հարգում եւ պաշտպանում է մյուսների ազատությունը: Մենք պետք է հիմնենք այնպիսի պետություն, որտեղ յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները կպաշտպանվեն: Այդպիսին են մեր ավանդույթներն ու արժեքները»,- ասաց Գիորգի Մարգվելաշվիլին:

Իր հերթին, անկախության տոնին նվիրված իր խոսքում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ անցած 25 տարվա ընթացքում Վրաստանն անցել է բարդ ճանապարհ, կրել մեծ զոհեր: «Մեր հայրենիքը շատ ցավ ու հաղթանակներ է տեսել, սակայն այսօրը, այսօրվա ձեռքբերումներն ու հեռանկարները նրա երաշխիքն են, որ մենք կապրենք ավելի լավ, միասնական եւ ուժեղ Վրաստանում»,- ընդգծեց վարչապետը:

Օրվա վերջում անցկացվեց հանդիսավոր ընդունելություն՝ նվիրված Վրաստանի անկախության վերականգման 25-ամյա հոբելյանին, որին ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Վրաստանի կառավարության եւ խորհրդարանի անդամները: Հանդիսավոր ընդունելությանը ներկա էին նաեւ Վրաստան ժամանած օտարերկրյա պատվիրակությունները, այդ թվում Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակությունը փոխնախագահ Հերմինե Նաղդալյանի գլխավորությամբ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները, որոնց թվում էր Վրաստանում Հայաստանի դեսպան Յուրի Վարդանյանը, Վրաստանի հասարակայնության ներկայացուցիչները:

ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎԵՑԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Մայիսի 26-ին, Վրաստանի պետական անկախության վերականգնման 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակներում, անցկացված նորակոչիկների երդման արարողությանը, հոբելյանական ֆոտոցուցահանդեսին, գալա-համերգին մասնակցության համար հրավիրվել էին նաեւ վիրահայ ներկայացուցիչները: Հանդիսությունների շրջանակներում անցկացված միջոցառումներին մասնակցեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի խորհրդարանի Նինոծմինդայից նախկին մեծամասնական պատգամավոր Մելս Բդոյանը, Ախալքալաքիի ATV-12 հեռուստաընկերության տնօրեն Վահրատ Քթոյանը, Նինոծմինդայի «Փարվանա» հեռուստաընկերության հիմնադիր Կոնստանտին Վարդանյանը:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՆՎԱԶՈՒՄԸ ԼՈՒՐՋ ԱՀԱԶԱՆԳ Է

Ինչպես արդեն հաղորդել ենք, 2014 թվականի նոյեմբերի 6-16-ն ընկած ժամանակահատվածում, երկրի մասշտաբով անցկացվեց բնակչության համընդհանուր մարդահամար: Մարդահամարը անցկացվել է երկրի 82 տոկոս տարածքի վրա՝ 71 միավորներում, 3765 բնակավայրերում, եւ ընդգրկվել է բնակչության 79 տոկոսը: Մարդահամար չի անցկացվել Վրաստանի բռնազավթված տարածքներում՝ Աբխազիայում եւ Ցխինվալիի տարածաշրջանում:

Բնակչության նոր հաշվառման տվյալներով, 2002 թվականի մարդահամարի համեմատությամբ, երկրի բնակչությունը նվազել է 15 տոկոսով եւ ներկայումս կազմում է 3713804 մարդ:

Բնակչության թվաքանակի նվազումը, վիճակագիրների հավաստմամբ, պայմանավորված է միգրացիայի բարձր մակարդակով եւ ծնելիության նվազեցմամբ:

ՆԱԽՈՐԴ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ՝ ՄԻՆՈՒՍ 47 ՀԱԶԱՐ, ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՈՒՄ՝ ՄԻՆՈՒՍ 81 ՀԱԶԱՐ

Ինչ վերաբերում է կոնկրետ տարածաշրջաններին, ապա հաշվետու ժամանակահատվածում Սամցխե-Ջավախեթիի բնակչության թվաքանակը նվազել է 47094-ով, Քվեմո Քարթլիինը՝ 81,4 հազարով: Ըստ տարածաշրջանների, Սամցխե-Ջավախեթիում ամենից շատ նվազել է Ախալքալաքիի բնակչությունը՝ գրեթե 16000-ով, ամենաքիչը՝ Ասպինձայինը, իսկ Քվեմո Քարթլիում՝ Մառնեուլիում՝ 13,7 հազարով, ամենաքիչը Ծալկայում՝ 3,2 հազարով:

2014 թվականի տվյալներով, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում ապրում է 160504 մարդ, այն դեպքում, երբ 2002 թվականին բնակիչների թիվը հասնում էր 207598 մարդու, իսկ Քվեմո Քարթլիում 426,4 հազար մարդ՝ 2002 թվականի 507,6 հազարի դիմաց:

ԱՄԵՆԱՇԱՏԸ ՆՎԱԶԵԼ Է ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ, ԱՄԵՆԱՔԻՉԸ՝ ԾԱԼԿԱՅՈՒՄ

Առանձին մունիցիպալիտետների հաշվառմամբ, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Ադիգենիի մունիցիպալիտետի բնակչությունը նվազել է 4290-ով եւ ներկայումս կազմում է 16462 մարդ, Ասպինձայում ապրում է 10371 մարդ (2002 թվականի համեմատությամբ նվազել է 2638-ով), 7208-ով նվազել է Բորժոմիի բնակչությունը, 2014 թվականի տվյալներով, այստեղ ապրում է 25214 մարդ:

Ինչպես արդեն նշեցինք, ամենամեծ նվազումը գրանցվել է Ախալքալաքիի մունիցիպալիտետում: Այստեղ, 2002 թվականի 60975-ի դիմաց, վավերացվել է 45,1 հազար բնակիչ (նվազումը կազմել է գրեթե 16 հազար):

2002 թվականի 34305-ի դիմաց, Նինոծմինդայի մունիցիպալիտետում վավերացվել է 24491 մարդ, այսինքն՝ բնակչության թվաքանակը նվազել է գրեթե 10 հազարով:

Գրեթե 7,5 հազարի նվազում է գրանցվել Ախալցիխեի մունիցիպալիտետում: Նոր մարդահամարի տվյալներով, այստեղ ապրում է 38897 մարդ:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մունիցիպալիտետներում գրեթե նույն պատկերն է: Այստեղ բացառություն է կազմում միայն Ռուսթավի քաղաքը, որի բնակչությունը հաշվետու ժամանակահատվածում ավելացել է 8 հազարով եւ կազմել 126 հազար:

2002-2014 թթ. 22,5 հազարով նվազել է Բոլնիսիի մունիցիպալիտետի բնակչության թվաքանակը: Ներկայումս այստեղ ապրում է 53,8 հազար մարդ, Գարդաբանիի մունիցիպալիտետում 2002 թվականի 116,4 հազարի դիմաց, ներկայումս գրանցվել է 82,3 հազար մարդ, Դմանիսիի մունիցիպալիտետում այդ տվյալները, համապատասխանաբար, կազմում են 19,1 եւ 28,4 հազար: Թեթրիծղարոյում, ներկայիս 21 հազարի փոխարեն, 2002 թվականին գրանցվել էր 26,4 հազար մարդ:

Ինչպես նշել ենք, ամենամեծ նվազումը գրանցվել է Մառնեուլիի մունիցիպալիտետում: Այստեղ, 2002 թվականին գրանցված 121 հազարի դիմաց, ներկայումս վավերացվել է 105,3 հազար բնակիչ: Ծալկայի մունիցիպալիտետում, 2002 թվականի 22,1 հազարի դիմաց, 2014-ին գրանցվել է 18,9 հազար մարդ:

2014 թվականի մարդահամարի տվյալներով, Սամցխե-Ջավախեթիում ապրող 160504 մարդուց 77498-ը ազգությամբ վրացիներ են, 81089-ը՝ հայեր, 712-ը՝ ռուսներ, 420-ը՝ հույներ, 393-ը՝ օսեր, 142-ը՝ ուկրաինացի, 89-ը՝ ադրբեջանցի, 2-ը՝ ասորի, մեկը՝ եզդի, 147-ը՝ տարբեր ազգությունների: Ցավոք, մեզ չհաջողվեց համապատասխան տվյալներ գտնել Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մասին:

ՄԱՍՆԱՎՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹՎՈՎ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՆ ՈՒ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՆ՝ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ԵՌՅԱԿՈՒՄ

Եվս մի հետաքրքիր հանգամանք: 2014 թվականի տվյալներով, երկրում հաշվարկվել է 1109,0 հազար մասնավոր տնտեսություն: Մասնավոր տնտեսություններում մշտապես բնակվողների թիվը կազմում է 3702,1 հազար մարդ, այսինքն՝ երկրի ողջ բնակչության 99,7 տոկոսը: Բնակչության աննշան մասը (0,3 տոկոս) ապրում է ինստիտուցիոնալ հաստատություններում (օրինակ, պենիտենցիալ հաստատություններում, ծերանոցներում, մենաստաններում եւ այլն): Մասնավոր տնտեսությունների քանակը, 2002 թվականի հաշվառման համեմատությամբ, նվազել է 10,8 տոկոսով:

Ելնելով մասնավոր տնտեսությունների անդամների միջին քանակից՝ Քվեմո Քարթլիի եւ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանները, համապատասխանաբար, 3,7 եւ 3,6 մարդ ցուցանիշներով զբաղեցնում են առաջին եռյակի երկրորդ եւ երրորդ տեղերը՝ 4,0 մարդ ցուցանիշով զիջելով միայն Աջարիայի Ինքնավար Հանրապետությանը:

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՆ «ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՑ» ՄԵԿՆ Է

Ինչ վերաբերում է արտագաղթի տվյալներին, ապա 2014 թվականի բնակչության մարդահամարի տվյալներով, Սամցխե-Ջավախեթիից օտար երկրներ մեկնած բնակիչների թիվը կազմում է 3,1%, Քվեմո Քարթլիից՝ 12,5 տոկոս: Իմիջիայլոց, Քվեմո Քարթլին այդ առումով «առաջատարների» թվում է՝ զիջելով միայն Թբիլիսիին (31,6 տոկոս) եւ Իմերեթիին (22,9 տոկոս):

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ